.Զ ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1903 — ԹԻՒ 580

ՇԱՐԺՈՒՄ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀԱՆԷ Տ"ԲԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ	համար
Տարեկան	12 Ֆր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի	
համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Ամերիկայի	համար
Տարեկան	3 տլր.
Վեցամսեայ	1.50 »

Ուրանուցման տոկոսը առաջին երեսի համար 10 սանթիմ վերջին երեսի համար 20 սանթիմ ի. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլայ։

Վաճառքի համար ձեռքի 10 սանթիմ

Նամակ եւ դրամ ղ. կիզ հրատարակութեան հասցեին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքի
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք հաս. չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐԱՒՈՂԸ ԲԱԺԵՆԵԼԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԿ ՎՃԱՐԷ

ՀԱՅՏԸՐԸ ԼԱՀԷԻ ԴԱՏԱՐԱՆԻՆ ԱՌՋԵՒ

«... Սորա համար ես չեմ կարող, ո՛վ Տէր իմ, Խաչին և Աւետարանին առաջ չոգած համբուրելով և մեծ երդիւղածութեամբ կնքած նուիրական և անաւոր ուխտիս դէմ դրժել։ Պատասխանատու մնալով առաջի Աստուծոյ, առաջի եկեղեցւոյ և առաջի ազգիս Հայոց, որով մնայ ինձ այնուհետեւ յաւիտենական անէծք, ո՛հ, նզովեալ պիտի կնքուի գերեզմանս և ընդ անարժանս դասի անուանս յիշատակ, զրկուելով օրհնութեան եկեղեցւոյ, և արդ հասեալ կամ ես խորին ծերութեան, մահն մօտալուտ է և ես չեմ կարող մահուան դրան մօտ դրժել իմ նուիրական ուխտին դէմ։ Ուստի կրկին աղերս մատուցանեմ առաջի Քո, քաղցր և բարեգութ Տէ՛ր, յառաջ բերեմ տան Գեթսեմանի պարտէզին աղօթաւոր Յիսուսի բան—Անցո՛ այս բաժակ Հայոց եկեղեցիէն...»

Հայոց ծերունի Հայրապետի այս սրտաշարժ պաղատանքին առաջ ապառաժը կը հալէր, բայց հիւսիսի ձերմակ արջը մնայ սառնասիրտ ու անողորմելի։ Օր ցերեկով Յարի պաշտօնեաները կոտրտեցին Էջմիածնի դռները և ամենատոր դողի մը լեռին լրբութեամբ յափշտակեցին օրը ազգի մը ունեցած վերջին լումաները։ Ամեն ժամանակներու համար անլսուր բարբարոսութիւն մը, որու նմանը Հայոց հալածուած ազգը չէր տեսած Ճէնկիզ խանի և Լէնկիմուրի նման բռնաւոր հրէշներու օրով։

Այս բոլորէ յետոյ սկսաւ անողոք և անհաւասար կռիւը իր իրաւունքներուն և ազատութեանը պաշտպան քաջարի ժողովուրդի մը ու կազմակերպուած բռնակալութեան մը միջեւ։ Այս կռիւը պիտի շարունակուի և յաղթանակը անպատճառ պիտի մնայ մեր կողմը։

Այժմ գաղթականէրը հասնելէն վերջ ինկաւ հպարտ Հռոմը։ Հոլանտացի ափ մը ժողովուրդի 150 ամեայ հերոսական դիմադրութենէն յետոյ տեղի տուաւ Սպանիան և Փիլիպպոս Բ. ի կառավարութիւնը կտոր կտոր փշրուեցաւ։ Պատմութեան օրէնքները չեն փոխուիր։ Նոյն բաղդին պիտի արժանանայ և սլաւոնական կոյր բռնապետութիւնը։ Ու արդէն նշանները մեր աչքին առջեւ են։ Յեղափոխութեան ու դժգոհութեան կրակը ներսէն ու դուրսէն կը մխայ Ռուսիոյ շուրջը...

* * *

Ըսինք Ռուսահայութիւնը հերոսական կռուի է դուրս եկած ցարի կողակներուն դէմ։ Այդ կռուի կոչը մենք՝ արտասահմանի և Թուրքիոյ հայերս բարձրաձայն կարդացինք և սկսուէլէ յետոյ ալ հրահրեցինք զայն։ Այսպէս ընելու իրաւունք ունէինք, որովհետեւ համայն հայութեան շահերը ստանակոս կըլլային։ Հիմա Ռուսահայ մեր ազգայրները մինակ ձգել և հեռուէն հանդիսատես ըլլալ պիտի նշանակէր դաւաճանութիւն։ Մենք չենք յուսար որ Թուրքիոյ և արտասահմանի հայերը ընեն այդ վատութիւնը։

Հապա ի՞նչպէս մասնակցինք ընդհանուր կռուին։—Մասնակցելու չատ մը ձեւեր կան, բայց մենք այս անգամ մէկէն պիտի դնենք գործնական առաջարկը։

Ստոյգ աղբիւրէ կիմանանք, որ հեղինակաւոր շրջաններ կը պատրաստուին Ռուսաստանի հայերուն հրաւէրներ ուղղել՝ որ անոնք կալուածական խնդիրը յանձնեն Լահէի Միջազգային Դատարանին ու հոն իրաւունք և արդարութիւն պահանջեն իրենց կողոպտուած դանձերուն համար։ Կալուածական հարստութեան մեծագոյն մասը կը պատկանի ոչ—ռուսահպատակ հայերու և ռուսը աւելի եւս իրաւունք չունի իրեն հպատակ չեղած ժողովուրդի մը սեփականութիւնը լու�նել։

Թող յուզուի նորէն Թուրքիոյ, Պարսկաստանի և արտասահմանի հայութիւնը ու այս ուղղութեամբ առնէ քայլեր։ Թող կազմակերպուին նորէն ժողովներ և միթինկներ և ըլլան պէտք եղած տեղերը գիմումներ։

Այս հարցին վրայ մենք դեռ կանդրադառնանք աւելի մանրամասնօրէն և կընենք որոշ առաջարկներ, երբ ստանանք վերոյիշեալ հրաւէրները։

Զինաթափ չըլլանք հայեր, հեռու՝ մեզմէ վհատութիւնը։ Ցինուած արդարութեան և ճշմարտութեան զէնքերով պայքարինք ռուս բռնակալութեան դէմ և ցուցնենք թէ մենք թոյլ չենք տար անամօթօրէն ոտնակոխ ընել մեր իրաւունքները, բռնաբարել մեր ազատութիւնը։ Ապագայ յաղթանակը մերն է, հայե՛ր, յառաջ, դէպի գործ...

Մարզպետունի

ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ

Անցեալ օր մենք հրաւիրելով ամբողջէն ճանչնալ Կովկասահայ ժողովուրդը, կառաջարկէինք ուսումնասիրել այն տեղի մեր գրականութիւնը։

Այսօր ընթերցողներու ուշադրութիւնը կը հրաւիրենք մեր մէկ յայտարարութեան վրայ, որ կը խօսի Կովկասահայ գրականութեան ամենէն լուրջ մը արտադրութեան՝ Մուրճի Բաժանորդագրական պայմաններու մասին։

Գրականութեամբ և գիտութեամբ հետաքրքրուող ամեն հայ ունենալու է «Մուրճը»։

Պուլկարաց Մեսրոպին առթիւ մեր շաբաթ օրուան թիւը լոյս չըպիտի տեսնէ։

ՓՈՔՐ ԹՂԹԱՏՄԱՐ

Ռուսճուք, 21 դեկ.

Ընթերցողները ինձ թող ներեն կարճ դիտողութիւն մը ընել հնչակեաններու բռնած մէկ հակասական ընթացքին մասին, բայց անոնք թող չի կարծեն, որ ես կուզեմ խլել «Շարժումի» այն վեհափառ լռութիւնը, որ կը պահէ դէպի կարգ մը հայհոյողներ։ Հայհոյելու ու զրպարտելու տեղը փողոցն է և ոչ թէ մամուլին էջերը։ Զայն լրագրութեան նիւթ դարձնել կարող են միայն Անդրէաս Յակոբեանի նման գրչակ մը և «յառաջդիմականութիւնը» իրենց առանձնաշնորհումը հռչակող մարդիկ, որոնք սակայն մեր արգահատանքը միայն կրնան շարժել։

Դառնանք սակայն բուն խնդրին։

Ըսինք թէ մատնանիշ պիտի ընենք հնչակեաններու մէկ հակասութիւնը։ Հնչակեանները սոցիալիստներ են—գոնէ ինքզինքնին այդպէս կը հռչակեն։ Յայտնի է որ սոցիալիզմը կռիւ է հրատարակած քաբիթալիզմին դէմ։ Ներկայ հասարակական կազմակերպութեան մէջ վաճառականութիւնը քաբիթալիզմի մէկ կարեւոր ներկայացուցիչն է, ուստի վաճառականներ և սոցիալիստներ իրարու թշնամի տարրեր են, ինչպէս թշնամի են հայ յեղափոխականները թիւրք բռժիմին դէմ։ Քանի որ այս այսպէս է հակասութեան մէջ ինկած չե՞ն ըլլար Ռուսճուքի մեր սոցիալիստ հնչակեանները, երբ անոնք հոս վաճառականներու մէջ հանդանակութեան կը ձեռնարկեն և յետոյ նուիրատուներուն պաշտօնապէս շնորհակալութիւն կը յայտնեն։

Եւրոպական քաղաքի մը մէջ անգամ մը սոցիալիստները ձմեռ ժամանակ գործադուլ ըրած էին։ Բարեսիրու վաճառական մը ուզեց իր հաշուոյն խեղճութեան մատնուած բանուորներուն ածուխ

և հայ բաժնել. բայց սոցիալիստները իբրեւ սկզբունքի մարդիկ մերժեցին օգնութեան այդ առաջարկը։

Ահա՛ եւրոպացի և հնչակեան հայ սոցիալիստները իրենց գործերով։

Ի՞նչ հակասութիւններ... խելք ունեցողը ալ թող դատէ։

Իրազեկ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Ամսոյս 21ին տեղիս ազգային արական վարժարանի սրահումը բանախօսեց Պ. Վարդ՝ նիւթ վերառնելով «հայկ. յեղափոխութիւնը ներկայումս»։

Սրանից յուրջ մի ամիս առաջ հընչակեան վայրիներից Պ. Հ. Կ. Ճիշդոյն հարցն էր լուսաբանում. Հրահատի եւ Վարդօի կարծիքների տարբերութիւնը այնքան մեծ չէ. երկու գործիչներն էլ փաստացի կերպով ապացուցին որ Ցաճկահայաստանի միակ փրկութիւնը յեղափոխութիւնից է կախեալ. նոյնպէս Ցաճկահայի ազատութիւնից է կախեալ իսկի ռաշխարհի ցրուեալ հայերի գոյութիւնը։ Էսաեղ թող ներեի մեզ փակագծում ասել որ Պ. Հրանատի միւս ընկերները տարբեր են մտածում ներանից։ Դեռ անցեալ օրերում Պարսկաստանից մի հնչակեան բացագանչում էր «Վերածնութեան» մէջ թէ Ճարիզմը չի տապալած մենք Թրքահայաստանում մի կանգուն հող անգամ չենք կարող ունենալ. եւ գրեթէ բոլոր հնչակեաններն էլ էսպէս են խորհում. մարդ ակամայ չուրում է. որպիսի հակասութիւններ...

Պ. Վարդօ խուռն բազմութեան մը առջեւ բացարձակ անկողմնակալութեամբ լուսաբանեց իր ընտրած նիւթը անկեղծ կուսակցականի մը դերը ստանձնելով։

Մեր ձեռնհասութիւնից շատ վեր է յարգելի բանախօսին ընկերաբանական տեսութիւնները ամփոփ կերպով մը ներկայացնել «Շարժումի» ընթերցողներին. այդ կը թողնենք կարող գրիչների. առ այժմ պիտի բաւականանանք միայն տրամագծօրէն մի տեսութիւն անել իր ընտրած բազմակողմանի նիւթի վրայ։

Սկզբից ծանրացաւ անհատական պարտականութիւնների վրայ. ասելով՝

«Ինչպէս որ անհատները իրանց կեանքի գոյութեան գիտակցութեանը պէտք ունին, էնպէս էլ ժողովուրդները, ընկերութիւնները իրանց վիճակի գիտակցութիւնը պէտք է որ ունենան. դժբաղդաբար ասում եմ սրանից 20 տարի առաջ մենք չենք ունեցել մեր վիճակի գիտակցութիւնը, մեր նախահայրերի գծած ճամբովն ենք ընթացել։

«30 տարի առաջ ունէինք մի ընկերութիւն Պոլսի մէջ, եւ այդ մեր աչքին մեծ բան էր երեւցել, որով մեր երեսփոխանները ճառում էին այնպէս ինչպէս այսօր Ֆրանսիական պարլամենտում» բայց մի քանի տարի վերջ բարեբաղդաբար կովկասում դուրս եկան յեղափոխական խմբակներ, որոնք եռանդուն կերպով գործում էին։ Ստեղծեց մի որոշ տիպ, ն ոյժերը կառավարելու համար, բայց որովհետեւ գործը նոր էր, ղեկավարողները ելիտասարդ էին, եւ. միեւնոյն ատեն ժողովուրդը դիակնացած ու մեռած էր. սովորական քայլերը նրան չէին կարող տեղէից շարժել. ինչ որ հնչակեան առաւելութիւնն էր. այդ յեղափոխական գործը բարոյական մեծ ազդեցութիւն գործեց ժողովրդի վրայ. բայց մի քանի տարուայ շրջանէն ետք նա կանգ առնել ստիպուեց. միեւնոյն ատեն նրանցից բաժանվեց գործիչների մի ստուար խումբ, որոնք այդ օրուանից կազմեցին մի ուրիշ կուսակցութիւն — Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը։ Սա աւելի անկեղծ ու աւելի եռանդով նեաւեց ասպարէզ շարունակելու համար միեւնոյն գործը. բայց չենք կարող ուրանալ թէ այդ 4–5 տարուայ ընթացքում հնչակեանները մեծ ճանապարհ էին կարել, որին արդիւնքն էր 95ի մայիսեան ծրագիրը, նոյնպէս նրանց գործն էր Զէյթունի ապստամբութիւնը. Սասնոյ կռիւը ինչն կոտորածները։ Արանից յետոյ նրանց եռանդը դադարեց գործելուց եւ կանգ առաւ հաղստանալու մօտ։ Մենք դժբաղդ կը լինէինք այդ կանգ առնուած ժամանակին եթէ չունենայինք մի ուրիշ ոյժ, որը եթէ չէ լինէր ժողովուրդը դէպի յեղափոխութիւն մղելը անկարելի պիտի լինէր։ այո՛, նրանք չի քնացող զայթնացած ժողովուրդը զարթեցրին. բայց եւ այնպէս որքան մեծ ու յարգելի է համարեւում գործ մը սկսելը, նոյնքան եւ տեսնել մեծ ու յարգելի է համարվում նոյն գործը շարունակելը. եւ այսօր Հ. Յ. Դ.ը գտնւում է շարունակման գործին մէջ. նա դեռ ես կանգ չէ առեր եւ դեռ չէ պարպել իր մեքենայի ամբողջ ոյժը, չոգին։

Եւ երբ յեղափոխական գործը շարունակելու ճիգերն էին թափում, միւս կողմից տեսնում ենք որ ամենախայտառակ կերպով դուրս են գալիս ալաոտ անհատներ, վնասակար մարդիկ, որոնք օգտուելով ժամանակի մթութիւնից՝ կարողացան դժբաղդաբար —դժբաղդաբար կասենք, որովհետեւ նրանց աշխատութիւնը մերն էլ է— հնչ. կուսակցութիւնը պառակտել, այդ օրերում հայայեղափոխական տարրը ցածութիւնը ունեցաւ իր վրայ դրոշմելու յեղափոխական մակդիրը. այդ մարդիկը առիթից օգտուելով ժամանակին մեծ ազդեցութիւն ունեցան Պոլսոյ ժողովրդի վրայ. մենք ժամանակին փողի կարօտ կը քաշէինք մի յեղափոխական թերթ, մի խուսիկ հրատարակելու. իսկ այդ ատեն թէ Պոլսում եւ Արտասահմանում ստեղծուեց մի մամուլ, որի մէջ տպրդեցին ամենաաղտոտ տարրերը։ Զէյթունի գործիչ Աղասին սկսաւ քարոզել թէ դրսից ու կնոջից աւելի լաւ բան չկայ։ Արփիար մը տարբեր ձեւ. այսպէս շատ մը ուրիշ անմտութիւններ։»

Անանախօսը չշարունակեց եւ մի ուրիշ երեւոյթը.

Նա ասաւ, որ տասնեակ երիտասարդներ համալսարանում պաշտում էին յեղափոխական գաղափարը. բայց յետոյ դարձան ամենայետադիմականները եւ այսպէս շարունակաբար. եւ այդ հակայեղափոխական տարրերը, որոնք Սուլթանական քաղաքականութեան ուղղակի կամ անուղղակի կերպով ոյժ էին տալիս, դուրս բերեցին մի վնասակար մամուլ, որի մէջ լուսանքներ էին թափում ազնիւ գործիչների հասցէին. կարդում էին տարտամ քարոզներ։ համերաշխութիւն էին բացագանչում, միութիւն էին բղաւում եւ այսպէս խեղճ ժողովրդի ամենախոյլ կողմը շահագործելու միջոցներ էին փնտռում. ամեն մի աղտոտ անկիւններից դուրս էին գցում իրանց վիկը եւ ասում էին թէ պէտք է կուսակցութիւնները միանան, միակ փրկութեան ճամբան այդ է. ատեն մը Արփիարի նման ինկած տիպ մը հրաւիրակ նեաեցին եւ պատ ոչ ատեան պահանջեցին։ Հակայեղափոխական տարրը էսպէս շարունակեց իր ազգաւեր ընթացքը. բայց Դաշնակցութիւնը կորովը ունեցաւ ապառամի գէս դիմադրել՝ քան չի շեղելով իր գծած շաւղից՝ չընկճուեց մինչեւ վերջը. ժողովրդի մեծ մասն էլ գիտակից դարձաւ այդ խայտառակների չարաթանութիւններին. այսօր հակայեղափոխականները «վերակազմելու» ասած կուսակցութիւնը բարոյապէս ընկած ու պախարակելի է դարձել միայն այս ու այն մութ անկիւնում ինկած իրենց գոյութիւնը քարշ են տալիս. մասապես, վնասաւորապես դառնալով խեղճ ժողովրդի անգիտակ մասին։

Միութեան խնդրի առթիւ առնախօսը օրինակ բերեց մի կապք, որի երկու հակառակ կողմերից ընկել էին ձիաները. կապքը անշուշտ առաջ չէ գնում, որովհետեւ յառաջատանողները երկուքն էլ հակառակ ոյժեր էին։ Էսպէս էլ եղաւ մեր միութիւնների հետ։ Դաշնակցութիւնը սկզբից զգոյշ է վերաբերվել հանդէպ այդպիսակ խախուտ ձեռնարկների. միեւնոյն զգոյշութիւնը ունի և այժմ։

Իրեւ վերջաբան բանախօսը հետեւեալ մտքերը յայտնեց.

«Ամեն հայ որ համոզուել է մի սիրտ է կրում, եթէ չէ կարողանում կուսակցութիւնների սէջ մտնել եւ Ս. գործին ակդիւ կերպով մասնակցել, գոնէ հաղթել թող գիտենայ հակայեղափոխականներին, ուրտեղ որ էլ լինեն նրանք։ Այն կակը, որ դեր չունի կեանքի մէջ պէտք չէ ապրի, այն հայը, որ իրան չզգոք է համարում թող գոնէ քաղաքացիական տարրական արիութիւնը ունենայ այդ գործին խոչնդոտներին չեզոքացնել։

Ահա մի փոքր դուռ յարգելի ատենախօսի ասածներից։

Ժողովը փակվեց և ժողովուրդը յուզիչ տպաւորութեան տակ ցրուեց։

Մի—ծէ

22 Դեկտ. 1903
Բուռնուք

ԴՊՐՈՅԱԿԱՂ ՀԱՆԴԷՍ

Ս. Ստեփաննոսի ասնին առթիւ վաղը՝ հինգշաբթի տեղւոյ եկեղեցիին մէջ պիտի կատարուի Ազգային վարժարաններու տարեկան հանդէսը։

Աշակերտներու կողմէ պիտի ըլլան արտասանութիւններ, պիտի երգուին երգեր։ Հանդէսը պիտի փակուի ատենախօսութեամբ մը։

Հանդէսը կըսկսի եկեղեցական արարողութենէն անմիջապէս ետքը։

Միրոյ հրաւիրուած է Վանայի Հայ հասարակութիւնը։

Ուսուցչական Մարմին

ԳՂԱՓԱՐԻ ՄԱՐՏՈՒՄ

Պ. Սահմանեանի յիշատակին

Գ.

ԲԱՆԴԸ

Խաւարը տիրեց աշխարհին, իր մռայլ քօղի տակ ծածկեց ե՛ւ մարտի արենոտ դաշտը, ե՛ւ մօտակայ պարքապոտ ու փաստակներով լի Էսիրնէն, ե՛ւ նրա արեւքաւ սրտին նստած ահաւոր, հին չինութիւնը, քա՛նայ։ Դեռ կռուի դաշտերից իսկոյն յետոյ ամբողջ շրջակայքը մնչեց. մարդ եւ անասուն միակերպ կծկեցին յանկարծանաս սարսափի ահից։ իսկ երեկոյեան վերջալոյսից յետոյ, խաւարի ծոցում՝ նրանք ասես չորացան, չնչասպառ քարացան իրանց բներ ում, խորշերում։ Լռութիւնը սիրականօրէն պատել էր ամբողջ բնութիւնը. մանուայ հովանին ասես փռուել էր երկրի վրայ. մռայլ ու չարագոյ շակ։ Քաղաքի փողոցներում մերթ ընդ մերթ լոկ մոլեգնած պահակների ստուերն էին շարժում խմբերով, կասկածոտ ու անսիրտ, սեւ ու անհատատատ։

Մէկ բանաւոր էր ընկել ինչ որ ոգեւոր խօսակցութիւն, փսփսոց։ Փոշու, ճանրեի տակ թաղնուած բոլոր կայծերը, ջախջախուած կրնքերի տակ թեմեւ բարախող վիրաւոր սրտերը՝ այսօր կրգուեցին մի արտասովոր պատահարից. կայծերը մըխացին, փայլեցին, խոցերը բացուեցին, ասպնջական անցեալի քաղցր յիշատակների դիմիչ երազների պէս պատեցին տանջուած զլուխները... Զորս հատ, չորսն էլ իրարից ջահիլ ու հպարտ. բոլորն էլ վսեմ, մէկը միւսից վիրաւոր, մէկ՝ միւսից արնաքամ։ Բաղդակցի դուխը էլ կանգ չի առնում իր վիճակակցի կեանքի, դրութեան առաջ։ Ովքեր ե՞ն, ինչու բերեցին, ինչքա՞ն էլ վերքեր են ստացել. կոիւը անհաւասար է եղած, տաք, կրակոտ. անխայ։ Եւ խորհրդաւոր ինչո՞ւն, ասես թեւ ու թիկունք, մարմին առած, թռչկոտում էր խաւար բանտի կեղտոտ ու ցեխոտ խուռչների փոքրիկ կամարների տակ, տիզի մէջ թաղուած հոգիներից վեր, ինչ որ կենդանութիւն ու յուսոյ ցոլքեր տարածելով իր չուրջը։ Գաղանիքը տարօրինակ բան է կարծեսինքն իրան շարժում է եւ միեւնոյն ժամանակ ինչ որ անհանգիստ ոգու նման շարժում է, փրփրում եւ մութիկ սրտերը, նրանց քերում, հեռաքրքրում, մանաւանդ կեանքից զրկուղների, բանտարկեալների հոգիները։ Պէտք է բարձրանայ վերարկուն, իրողութիւնը մերկանայ լուսաւոր։

Ահագին բանտի սարերկեայ խոռոչներից մէկում, թանձր խաւարի մէջ ընկել էր անշարժ մի մարդկային մարմին։ Դիա՞ր թէ կենդանի —որոշել կարելի չէր։ Նեղ, խոշոր, մամռապատ ու խոնաւ քարերից հիւսուած ծեր պատերի մէջ, իրջեած ու ցեխոտ սառը յատակի վրայ, հաստ ու պինդ երկաթեայ դրան ետեւ տարածել էր Պետոն իր ամբողջ հսկայ մարմնով, ուշաթափ Հայդուկի զգեստը, գզզուած գդակներից ու հաւաածներից, կորած այժմ վիրակապի տակ, կորցրած արեան՝ առոյգ այտերի վրա թողած դալուկը։ մաղերի խառն ու անխնամ փնջիկները՝ ընկած խոհուն ճակատի վրայ

—այս բոլորը, բանտի խոնաւ հողի վրայ, տես ներկայացնում էին մի մեծ մարաիրոսի, նահատակի բեկորները, որպէս կայծակից ջախջախուած ժայռի կտորներ։ Կէս-գիշերից անց նրա նկուղից առաջին անգամ լսեցին ծանր ու ժանգապատ շղթաների զընգ-զընգոցը։ Նա չարչարեց մի փոքր գլուխը բարձրացրեց, նը. աղուն աչերը բաց-խուփ արեց խաւարի ծոցում եւ նորից ընկաւ անզգայ։ Այս անգամ երկաթը զընգզընգաց անաւոր ու բարձր, չորնդի հնչիւնը տարածուեց աւելի հեռուն, բաղդակիցների ականջներին։ Էլի համակ լռութիւն, որտեղից խաւար Առաւօտեան վաղ, երբ բարձր ու նեղլիկ լուսամուտից, որպէս ապառաժի լերկ կրծքի մի պատուածքից, ընկաւ արեգակի առաջին ճառագայթի թուլացած լոյսը։ Պետոն բացեց աչերը, ծանր ու երկար քնից զարթնածի պէս։ Դիտեց չուրջը երեխայի ապուշ հայեացքով։ ապա ծանր-ծանր իրերի պատկերացումը նա ըմբռնեց իսկապէս։ զննեց իր շորջը, քննեց խուցը, պատերը, դուռը, փականքը, շղթան, դիտեց վերքերի փութիթները—եւ իմացաւ խորապէս ամբողջ դառն իրականութիւնը։ Նա յիշեց Լեր հետ կատարածը, յիշեց կռիւը, ընկերները, յիշեց Թաթուլին։ Նրա հայեացքը, ժպիտը, նրա գերեզմանը... Նա փորձեց շարժ եւ, վեր կանգնել։ Թուլացած անդամները լոկ երերացին իրանց տեղերում եւ նորից ընկան։ Աչքերը յառած բարձրումը մի բորբոսած քարի ճեղքին, իր անզօրութեան մէջ վշտաբեկ, նրա ապակուպէս անշարժ աչերից այժմ արտասուքի երկու խոշոր ու ջինջ կաթիլներ գլորեցին զեղին ու սառը այտերի վրայ։ Վերջին կաթիլներն էին դրանք, որ Պետոն գլորեց, եւ ա՛վ գիտի ինչքան յաւերի ու անկատար իղձերի արտայայտութիւն պարփակուած էին այդ զոյգ բիւրեղներում։

Դրանից յետոյ նա զոհ էր իր վիճակից։ Նա իր ուժերի բովանդակութեամբ ուզեց իր ներկայ դրութեան մասնաւորներին պոկել այս գերեզմանից, գաղափարի նահատակներին ազատել այս գերեզմանից։ Նա զարկուեց ժայռին ու ընկաւ թեւարկի։ Այժմ հանդարտ էր ինքն էլ նրանց մօտ։ Չէ՞ քանի գոյութիւն ունէր այս տանջարանը գաղափարի զոհերուն նրա համար կեանքը տաժանելի էր։ Շղթայուածների մարտնչող զինուորին անհանգիստ հոգին այժմ միայն խաղաղ էր, նրանց կոչքին, կապանքներում ու վիրաւոր։

Եւ ամէն անգամ, երբ դահիճները մօտենում էին նրա կուսական մարմնին, նոր վէրքեր տալիս, տանջում, հարուածում—Պետոն լոկ անտարտուն թուլնոտ ու քինոտ ատելութեամբ լի արհամարհանքով էր պատասխանում բռնութեան գործակալներին։ Բոլոր վիճակակիցները հիացումով ու անոսանկի զուրգուրանքով էին դիտում նրան ու նրա երեք վիրաւոր ընկերներին, ակնածանքով ու խորին յոյգանքով վերաբերում դէպի նրանց դատապարտութիւնը գաղափարի մարտում։

Այսպէս անցան չորս ամիսներ...

Էմիլ Շղարշեանց

ԿՐԹԱԿԱՆ ԴՈՐԾԸ ՍԱԼՄԱՍՏՈՒՄ

Ընթերցողները շատ պարզ կերպով կը յիշեն «Շարժում»ի մէջ երբեմնակի լոյս տեսնող յօդուածները Սալմաստից, որոնք շատ տիւր կերպով էին նկարագրում Սալմաստի կրթական գործի ընկած դրութիւնը։

Բայց ներկայ ուսումնական տարին, անցեալի հետ բաղդատելով Ոսկէ դարը պիտի համարես։ Շնորհիւ Թաւրիզի «Էիլատ» թաղի «Հայկազեան» դպրոցի ուսուցչական խմբի ազգասիրական ոգւոյն և ժանտանդ նոյն դպրոցի տեսչի—Տիգրան Ռաշմաճեանի եռանդուն և խելամիտ մաքերին, որ նրա գլխաւոր յաջողութիւններից սկսեն է եղել «Գործ» և ո՛չ խօսք, ինչպիսին էր պատասխան Ե. Վ., Սալմաստի կենտրոնական ուսումնատան տնօրէն։

Անցնինք մեր նախկին խօսքին։ Ս. Բոլոր հինգ տարի Տիգրան Ռաշմաճեան իրեն տրուած բնաւորութեամբը անցած լինելով, ինչպէս վերեւում յիշեցի, իրեն գաղափարակից ուսուցչական մի խմբի գլուխ միմեանց նպատակ ունէր ժողովրդին համար պատրաստել իսկական մշակներ և սատել նրա խեղճ զաւակներին խաւարի ճանկերից, լուսաւորելով նրանց մտաւոր աչխարը։

Ցանած սերմերը իզուր չէին անցել։ Ռաշմաճեանի անդրանիկ ընթացաւորները այս տարի Պարսկաստանի զանազան կողմերը ուսուցչական պաշտօնով ցրիւ եկան։ Դաշնակցական ընկերների անդուլ ջանքերով անոնք մեծաւ մասամբ տեղաւորուեցան Սալմաստում։

Ընթերցողներին է մնում ազատ ասպարէզ—գործ դնելու իրենց թարմ ոյժը չմեռցնելու իրենց մէջ հաւաքուած էներգեան և փարատել Սալմաստցու սրտում բուն դրած կասկածոտ վերաբերմունքը դէպի ուսուցիչը։

Սալմաստում բոլոր գիւղերը գրեթէ ինչպէս ասացի դպրոցներ ունեն։ Մի անգամ ինձ յաջողուեց Փայաջուկ գիւղ ուսումնարանը այցելելու և ինձ բոլորովին սնունական էր թուում, մի քանի ամիս առաջ իմ տեսած խարխուլ դպրոցը։ այժմ կատարեալ պալատի սպաւորութիւն էր թողնում ինձ վերայ։ Նոյն դպրոցի աւագ ուսուցիչ Պ. Երուանդ Ֆրանգեանը ինձ առաջնորդեց բոլոր դասարանները և բացատրեց ինձ իրենց դպրոցի կարգ-կանոնը, որ ինձ բոլորովին հիացմունք էր պատճառում։ Նա տեսնում էի հոս «Էիլատ» դպրոցի ամբողջ տակտիկան և դասաւանութեան սեմսար։ Փայաջուկի դպրոցը ամբ ղջ Սալմաստի ուսումնարանների մէջ առաջին տեղն է բռնում։ վերեւ յիշած առաւելութիւններով, մի խօսքով տեղիս ուսումնարանների փայլող և լուսաւոր աստղն է։ Երանի թէ մեւս գիւղերի ուսուցիչները նոյն օրինակ առնէին Փայաջուկի դպրոցից։

Իմ կողմից բարի յաջողութիւն եմ մաղթում Պ. Ֆրանգեանին և իրեն պաշտօնակիցներուն։

Մեր երեխաների նպատակայարմար դաստիարակութիւնից՝ կախուած է Հայութեան ապագայ կուլտուրական յառաջդիմութիւնը։ Ուրեմն յարգանք այդ գործի բարեխիղճ օտառներին։

Թղթակից

17 Նոյ. 1903
Սալմաստ

ՖԻԼԻԳԷՅԻ ԹԱՂԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Գ.

Հացի ճարը.— «Նոյին շարունակութիւնը.— Ինչպէս է ընտրուում հոգաբարձութիւնը։

Վարժարանէն ներս կամ դուրս տեղի ունեցած ծանօթ խնդիրները դէպ ներգործութիւն որոնց հասարակութեան վրայ և Կրօնը յարմար առիթը գտաւ ինքնաստ իրեն շահագործելու աշխատիլ ատ տրամադրութիւնը։

Ամ հացի ճգնաժամային կռիւն էր որ իր բովանդակ մեկուութեամբը երեւան եկաւ։ Դուռ դուռ ինկաւ խնդրը, աղաչեց, պաղատեցաւ, որ ծնողքները զաւակնին չի իրկեն վարժարան։

Երեւակայեցէք, բարոյական սնանկութեան ինչ աստիճանի մէջ ըլլալու է ուսուցիչ մը կամ ուսուցիչներ, որ աշակերտը դռնէն կամ փողոցէն անցած ատեն կանչեն ու պատուիրեն որ վարժարան չերթան, սպասեն, որովհետեւ քանի մը օրէն իրենք պիտի գան...

Ամ ընողները աղոց վրայ ազդելու, տղաքը պատրաստելու(.*) պարտականութիւնը ստանձնողներ են... Անարժանե՛ր...

Եւ իսկապէս տղոց մէջ անգամ ճարակեցաւ հակառակութեան, «աս ուսուցիչը կուզենք-չենք ուզերի» գէշ գիրն։

Օրեր եղան՝ որ վարժարանը մինչեւ 5-10 աշակերտներ յաճախեցին շնորհիւ հացի համար ուսուցիչ եղողներուն ատ սուր փրոփականտային՝, թէեւ շատ չի քշեց և կամաց կամաց ատ թիւը նորէն սկսաւ բարձրանալ։

Իսկ հոգաբարձութեան և հրաժարող ուսուցիչներու ատ քայլերուն շնորհիւ աղաքը չարաչար տուժելէն ետ, Եարտրմեան պատուելին ալ իր «բողոքականութեան փրոփականդայիս» խմբոցը քաշեց 6-7 տղաքներ, որ հոն «Հայութեան եօթը դեւերը»-սքանչելի արամախսութիւն(.*) —սոլվելով գլուխնին ճաթեցնեն... Խեղճ և մի՛ամիտ ծնողքնե՛ր. յանցապարտ հոգաբարձունե՛ր և ուսուցիչներ...

Կրօնին միակ ձգտումն էր խնդիրը կիրքի վերածել, երկու կոմեր ըստեղծել և գործը հասցնել «պիտի մացնենք-չպիտի մացնենքի»։ Ասոր համար ամէն ճիգ ի գործ դրաւ, մինչեւ իսկ հանրագրութեան թուղթը ինք իր ձեռքով պատցուց և ընտրագրութիւն ստորագրել չափ իջեցել։ Ռաշմաճեանի անդրանիկ ընթացաւորները այս տարի Պարսկաստանի զանազան կողմերը ուսուցչական պաշտօնով ցրիւ եկան։ Դաշնակցական ընկերների անդուլ ջանքերով անոնք մեծաւ մասամբ տեղաւորուեցան Սալմաստում։

Ընթերցողներին է մնում ազատ ասպարէզ—գործ դնելու իրենց թարմ ոյժը չմեռցնելու իրենց մէջ հաւաքուած էներգեան և փարատել Սալմաստցու սրտում բուն դրած կասկածոտ վերաբերմունքը դէպի ուսուցիչը։

Սալմաստում բոլոր գիւղերը գրեթէ ինչպէս ասացի դպրոցներ ունեն։ Մի անգամ ինձ յաջողուեց Փայաջուկ գիւղ ուսումնարանը այցելելու և ինձ բոլորովին սնունական էր թուում, մի քանի ամիս առաջ իմ տեսած խարխուլ դպրոցը։ այժմ կատարեալ պալատի սպաւորութիւն էր թողնում ինձ վերայ։ Նոյն դպրոցի աւագ ուսուցիչ Պ. Երուանդ Ֆրանգեանը ինձ առաջնորդեց բոլոր դասարանները և բացատրեց ինձ իրենց դպրոցի կարգ-կանոնը, որ ինձ բոլորովին հիացմունք էր պատճառում։ Նա տեսնում էի հոս «Էիլատ» դպրոցի ամբողջ տակտիկան և դասաւանութեան սեմսար։ Փայաջուկի դպրոցը ամբ ղջ Սալմաստի ուսումնարանների մէջ առաջին տեղն է բռնում։ վերեւ յիշած առաւելութիւններով, մի խօսքով տեղիս ուսումնարանների փայլող և լուսաւոր աստղն է։ Երանի թէ մեւս գիւղերի ուսուցիչները նոյն օրինակ առնէին Փայաջուկի դպրոցից։

Իմ կողմից բարի յաջողութիւն եմ մաղթում Պ. Ֆրանգեանին և իրեն պաշտօնակիցներուն։

Մեր երեխաների նպատակայարմար դաստիարակութիւնից՝ կախուած է Հայութեան ապագայ կուլտուրական յառաջդիմութիւնը։ Ուրեմն յարգանք այդ գործի բարեխիղճ օտառներին։

Թղթակից

17 Նոյ. 1903
Սալմաստ

ՀԱՅԿ ԲԱՐՁՐԱՒԱ ԴՅԱԿԸ ԵՒ ԱՆԻ

(Ճանապարհորդական նկարագրութիւն Տօք. Բորթախի)

(Շար. 578դ թիւէն)

Հայոց հին մայրաքաղաքը կը ներկայացնէ աւերակներու կոյտ մը, որու մէջ հոս ու հոն դեռ կանգուն մնացած է մեծ չէնք մը՝ ցցուած դէպի վեր։ 14դ դարուն մէջ երկրաշարժը քանդեց Անին։ ասկէ առաջ սակայն թշնամիներէ քանիցս յարձակում կրած ըլլալով արդէն ան կորսնցուցած էր իր նախկին փայլը։ Ուայնուհետեւ ահա՛ աւելի քան հինգհարիւր տարիներ կը շարունակեն իրենց աւերիչ գործը։ Առաջին անգամէն անկարելի է ամբողջ քաղաքը մէկ ակնարկով դիտել, որովհետեւ գետինը հարթ չէ։ Մեկէ՛ քիչ մը հեռու կը տեսնուէր ապառաժեայ բլուր մը, որու վրայ կարծես ժամանակին կանգնած ըլլար Անիի ամրոցը։ Նոյն ուղղութեամբ կերեւար նաեւ հին խորանարդաքարերով պատուած պզտիկ տնակ մը։ Այս տան մէջ կապրին Անիի միակ բնակիչները—վարդապետ մը, իրեն ծառայելու համար ծերունի զոյգ մը եւ ասոնց մէկ տղեկը։

Զօրմանալի դիպուածով մը մեզ հանդիպեցան հոս շատ մը մարդոց բազմութիւն, բոլորն ալ զրդուած դրութեան մէջ էին։ Ապանութիւն մը տի՛ դուռնցած էր Անիի մօտակայ թրքական գիւղէ մը 13 տարեկան աղջիկ մը ղրկուած էր աւերակներուն վրայ այծեր արօտելու։ Աղջիկը յետոյ քարերուն մէջ դիէն վիրաւորուած եւ մեռած գտնուած էր։ Ազգականները հաւաքուած կը պնդէին, թէ հայ տղեկը եղած է սպաննողը։ Մօտակայ գիւղերէն կանչուած էին նաեւ երիտ հայ գիւղապետներ խնդիրը քննելու համար։ Վարդապետը հոս չէր։ ան կաթողիկոսին մօտ այցելութեան գացած էր Ներսունիներէն մարդը վախցած ու գունատուած կանգնած էր, մինչեւ կինը ուժեղ եւ պերճախօս կերպով իր որդին եղած ամբաստանութեան դէմ կը պաշտպանէր։ Ուղղ. իր վիճաբանութիւնը խզելով մեկ համար ուսելիք պահանջեց Ծղէկը ասկէ օգտուելով ներս վազեց եւ կրակ պատրաստելու պատրուակով անհետացաւ։ Թիւրքերը վերջապէս հեսացան՝ երբ երկու հայ գիւղացիները խոստացան հարցը դատաստանական հոգի վրայ դընել։ Տղեկը իմ վրաս լաւ տպաւորութիւն ձգեց եւ ես աւերակները դիտելու համար գոյն վերջը իրրեւ առաջնորդող հետս առի։ օթեւանելու համար մեզ տրուեցաւ վարդապետի խուցը։ եւ երբ մարդիկ իմացան, որ ես էջմիածնէն կուգամ անոնց յարգանքը եւ բարեկամութիւնը մեծ էր ինձ հանդէպ։ Ինչ որ շուտ մը կրնային՝ մեկտեղ բերին մեզ ճաշ պատրաստելու համար—հաւ մը, բրինձ, հաւկիթ, մածուն, գոմէշի կարագ լեվեշ եւ բիլաւ։ Ամէն ինչ ձեռքով պիտի ուտէինք։ Եթէ սեղանին վրայ հայկ. կարմիր գինին չըլլար ես բանէ մէն ալ համ չէի կրնար առնել արեւելեան այդ հանկիներէն։ Ճաշի միջոցին ծերունիները, այր եւ կին, ձեռքերնին խաչաձեւ ուսերնուն վրայ դրած երկրին սովորութեան համեմատ ոտքի վրայ կըսպասէին եւ իսնարնաբար մեզ կը դիտէին։ Կինը յետոյ ինձ մօտենալով սկսաւ հայերէն բաներ մը խօսիլ եւ ձեռքերը սրտին վրայ տանելով կուզէր գիս իրազուութեան մը մէջ հսմոզել։ Քահանան թարգմանեց տիկնոջ ըսածը, թէ իր որդին անմեղ էր Բիւրք աղջկան մահուան դէպքին մէջ։ Ես հանգստացուցի զինքը եւ խնդրեցի, որ տղեկը ինձ ընկերանայ եւ պէտք եղած ծառայութիւնը ընէ։ Ճաշէն վերջ մեր առաջին գործը պիտի ըլլար աւերակները այցելել։

Գերմ. Փոխադր. Մարզպետունի
(Շարունակելի)

ցուց հայարը։

Շատեր հակառակ բլլալով մէկեղ կրօնին, ստորագրութիւն տուած են, որովհետեւ հոգաբարձութեան բռնած դիրքը, ուղղութիւնը, ձեռք առած միջոցները—ինչպէս ըսի—զէր ազդեցութիւն բրած էր վրանին։

Կարճ խօսքով, մասնախումբին մէկը պէտք էր առաջ քշելու. «զուռնաճի» մը մէկ խօսքով և ատ զէր դերը իր վրայ առաւ սիրով հայ մանուկներու դաստիարակութիւնը ըստանձնելու յաւակնութիւնը ունեցող մէկը սիմիայն «հացի համար»...

* * *

Հանրագրութեան վրայ չատ չանցաւ հոգաբարձութիւնը լուծուեցաւ։ Կառավարութիւնը երեք անձնատուրութիւններէ բաղկացած յանձնախումբ մը նշանակեց մինչեւ նոր ընտրութիւն գործերը վարելու համար։

Ցանձնախումբն ալ—բացի մէկ անդամէն, որ խոշոր դեր չի խաղար—համակիր էր լուծուած հոգաբարձութեան։

Բնականաբար ամեն ողջամիտ հայ կըսպասէր որ խնդիրը հաշտարար կերպով վերջանար և միանգամ ընդ միշտ փակուէր, մոռցուէր ատ տրխուր և ոչ-պատուաբեր հակառակութիւնները։

Դժբաղդաբար ո՛չ մասնախումբը և ո՛չ ալ յանձնախումբը ուզեցին ուառան համերաշխութեան կեղեցիկ և օգտակար քայլը։ Երկու կողմէն ալ պակսեցաւ անկեղծութիւնը և «կիրքը», «եսը» զեր խաղացին։

Մօտեցաւ ընարութեան օրը։ Տեսանք որ օրին մէկը մասնախումբը վարժարանին վիճակով «անշահախնդիրօրէն» հետաքրքրուող բոլոր ազգայինները ժողովի կը հրաւիրէր։

Անգին հայութենէն ներկայ կը գտնուի հազիւ 40–50 հոգի, որոնց մէջ նաեւ երկու երեք երիտասարդներ, որ ոչ ատ ոչ ան կողմին համակիր էն։

Կեղծաւոր և վարպետ դարձուած քներով ժողովը կը բացուի և կը յայտնէ մասնախումբը թէ ինք 3 անձնաւորութիւններու հաւանութիւնը առած է հոգաբարձուի թիկնածութեան համար և եթէ կան ուրիշներ կընդունի։ Մասնախումբի ատ ժողովին մէջ սուտն ալ զեր կը խաղայ,—չի դիմուած մարդուն իբրեւ դիմուած կը կլլեցնեն։

Գաղտիար մը տալու համար թէ ո՞ր ատիճանի յարմար մարդիկներ են հոգաբարձութեան թիկնածուները—այսքան կարժէ յիշել, որ անոնցմէ երկու-երեքը «թանքեալային» ազէկ զէշը հասկնալէն անցին բան չեն զիտեր, իսկ միւսները ուղեցոյց կուզեն։ Եւ ցոյց տալու համար թէ մեր ապագայ հոգաբարձուները ո՞ր ատիճան կը հետաքրքրուին իրենց ըստանձնելիք դործով—կարժէ յիշել որ իրենց ապագայ պաշտօնին, գործին հետ ուղղակի առնչութիւն ունեցող ատ ընդհ. ժողովին միմիայն անոնցմէ մէկը ներկայ կըլլայ, որ, ինչպէս կերեւայ, ատոնց մէջ յարմար մարդն է եղեր։

Ցիշած երիտասարդներս կառաջարկեն որ փոխանակ ցանկը 5 հոգիով սահմանափակելու, մինչեւ 20 հոգիի բարձրանայ, որոնք առպատճառ բոլորն ալ հարուստ, «քիւրքիւ միւրքլիւ» չըլլան, կանաֆներ ալ գտնուին—հարկաւ հակառակ կողմի մարդոցմէն ալ—և ատ 20 անձնաւորութիւնները ժողով մը գումարելով հաւասարաչխարհաբար 5 անձնաւորութիւններ զատեն և ընտրելի հռչակեն։

Բայց որովհետեւ մասնախումբը, ինչպէս կերեւայ, խրատուիլակի դեր կատարող մարդիկ կուզէ հոգաբարձու տեսնել, որպէսզի իրենց իմանաձոյքը բլլայ նորէն կարող-կապողը և «եսերնին առաջ երթայ, անիրականալի կը դանեն ատ այնքան գործնական առաջարկը և տեսնելով որ բաւական հակակարծիքներ կան, խնդիրը աւելի չատ չի ձգձգելու վախէն անմիջապէս ձայնի կը դնեն—որ համերաշխութեակը, հասկացողութեամբ գործել չուզողներուն չատ անգամ իբրեւ ապաւէն կը ծառայէ։ քանի որ չընտրուողները, դժբաղդաբար, միշտ մեծ թիւ կը կազմեն—և ջուխտ-ջուխտ, երեք-երեք կը համբուին ձայները և հոգիւ 1–2 ձայնի «կասկածելի» առաւելութեամբ մը մասնախումբին առաջարկը կընդունուի։

Ուրախալի կէտը հոն է որ, երիտասարդներու առաջարկին կողմնակից կըլլան բոլոր հակցող մարդիկը, նոյն իսկ մասնախումբի անդամներէն և մեծ մասամբ ձեռք վերցնողները անանկ մարդիկ կըլլան որ կը վերցնեն ձեռք, որովհետեւ այս ինչ «չարպաճիոն» վերցուց։

Վերջապէս հոս ալ մասնախումբը անկեղծ դուրս չի գար։

(Մնացածը յաջորդով)

Ղրքակից

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ֆրանքֆուրդէն մեզ կը գրեն.

«Իրօֆէսոր Խալատեանց Հայտըլպէրկի հայերէն, ռուսերէն և պարսկերէն լեզուներու ուսուցիչ սնուանուած է։ Ցիշեալ լեզուները մինչեւ ցարդ ուսումնական ցանկին մէջ չկային։»

—Ալթէնքէն մեզ կը գրեն.

«Բէօսթէնճէի մէջ իր շահատակութիւններով ծանօթ Տ. Խորէն Մուրատեան քահանան այսօր նոյնը կը փորձէ ընել Պիլէոնի մէջ և թլուրքերէն լեզուով օտարներու ներկայութեամբ կը յայտարարէ. «Յոյն պիտի բլլամ և հայերէն վրէժ պիտի լուծեմ։» Այդ աւօրէն քահանան հոս ալ երկայ չի կրնար մնալ. ուստի կըզդուշացնենք հասարակութիւնը, որ չի փաթթուի անկէ, ուր որ ալ ան երեւայ։»

—Տօնական օրերու առթիւ Պոլսոյ մէջ Ս. Փրկիչի հիւանդանոցին և Գալֆաեան որբանոցին եղած են նուէրներ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այդ. ժողովին մէջ Բէթքով առաջարկեց գրագէտ և բանասեղծ Վասօվին տարեկան 4,700 ֆր. ռոճիկ յատկացնել անոր պուլկար ժողովուրդին մատուցած գրական ծառայութեանց համար։

Առաջարկը ընդունուեցաւ մեծ ոգեւորութեամբ։

—Իշխանը այցելեց Սոֆիայի զինուորական քլուպը Ռուսիայէն Սոֆիայի թանդարանին եկած նուէրները դիտելու համար։ Այս առթիւ քանի մը սպաներ Պուլկարիոյ ազատագրութեան կռուի վրայ ճառեր խօսեցան։

—Իշխանը 140 ֆր. նուիրեց Սոֆիայի Նկարչական դպրոցի աղքատ աշակերտներուն։

—Ազգ. ժողովին մէջ Եօնով պահանջեց, որ այն երիտասարդները, որոնց հայրերուն տարիքը 65ը անցած է և որոնք 1000ֆր.է աւելի կարողութիւն չունին զինուորական ծառայութենէ ազատ հռչարուին։

Պատերազմական նախարարը Սավով հակառակեցաւ։

—Դոպրանիչէի մէջ կառավարականները կուզեն ընդհանուր ներում չնորհել դատապարտուած երեք նախարարներուն, Թատօսլավօֆի, Իվանչովի և Թանչէվի։ Ժողովին չը մասնակցող ընդդիմականները այս առիթէն օգտուելով հակակառավարական պրոպաղանդ կընեն, որովհետեւ դատապարտուած Ն. խարարները ժողովրդականութիւն չեն վայելեր։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Մօնթէնէկրօյի սահմանին վրայ քրիստոնեաներու և մահմետականներու միջեւ արիւնահեղ բաղխում մը տեղի ունեցած է։ Մօնթէնէկրօյի կառավարութիւնը դիմում բրած է Դրան՝ կինախափ ընել մահմետականները։

—Արսլթրլ Վօյվոտա անուն մակեդոնացի յեղափոխական մը արէ անցուցած է մատիչներու խումբ մը և հետեւեալ պարսնակութիւամբ նամակ մը դրած է Կիւմիւճէի միւտիրին. «Մատնիչները ես սպաննեցի, որովհետեւ անոնք մեր արդար դատին թշնամիներ էին։ Իմ անունս Վօյվոտա է։ Գիտցիր. ես որոշեր եմ արէ ռնցունել նաեւ մնացեալ մատիչները։ Մենք չահ չենք փնտռեր, մենք կը գործենք մեր իրաւունքներուն և ազատութեան համար։ Խեղճ դիւղացիները չի չալչարես։ Երբ այդպէս բան լմանամ 150 հոգւով կուգամ գիւղը և ձեզ կը կոտրեմ։»

—Հոսվմի թիւրք դեսպանը Իտալական կառավարութենէն խնդրեց, որ սպայ մը նշանակէ մակեդոնական ոստիկանութիւնը կազմակերպելու համար։ Մտադրութիւն կայ նշանակել Ցէճիօրճիս։

ՍԵՐԲԻԱ

Պելկրատի քաղաքացիական կազինոյին մէջ ինպաստ Մակեդոնիոյ հանդանակութիւն բացուելով քառորդ ժամուան մէջ հաւաքուեցաւ 20,000 ֆրանք։

Ն. ՄԱԿԱՏՈՒՓ

Պուքրէշ.—Դրիգոր, իմացուցէք մեզ Ձեր հասցէն։

—Թէհրան.—Դ. Մ. Վ. Ձեր յանձնարարութիւնը կատարուած է։ Ձեր ուղած քարթերու և պատկերներու համար դիմեցէք Ժընէվ, «Դրօշակի» խմբագրութեան։

—Մընոի.—Պ. Հ. Դ. թերթը կըստանանք։

—Պոսթըն. —Պ. Ց. Կ., Ուշադրութեան առնուեցաւ։ Շնորհակալութիւն։

—Բուսճուք.—Պ. Մ. Պ. Ձեր բոլոր գրկածները ստացած ենք։ Շնորհակալութիւն։

ԱԶԴ

Ինչպէս որ յայտարարած էինք ասկէ առաջ, հիմա մեզի հասած են Դաշնակցական գործիչներու և կուսակցներու 11 տեսակ քարթերը։ Դին 10 անդ.

Հասած են նոյնպէս Պետօր(վանեցի), Բարկէն—Սիւնիի, Ազբիւր-Սերոբի և Լ. Զօրեանի մեծադիր պատկերները շատ մաքուր տպագրութեամբ։ Դին 50 անդ.

Նոր տարուայ և Մնուանդի համար յարմար ընծաներ։

Վարչութիւն
Բարկեն-Սիւնի Ընթերցարանի
Վառնա

Հասցէ
Հայկ. Ընթ Վառնա

Բացուած է 1904ի Բաժանորդագրութիւն

«ՄՈՒՐՃ»

Գրական, Հասարակական և Քաղաքական Հանդէսի։

«ՄՈՒՐՃ» հանդէսը, որ երեք տարիէ իվեր կը հրատարակուի նոր խմբագրութեան մը կողմէ և աշխատակցութեամբ ռուսահայ և թիւրքահայ ամենալաւ գրագէտներու, Հայոց միակ լուրջ ու եւրոպական իմաստով հանդէսն է այսօր։ Իւրաքանչիւր տարի լոյս կը տեսնէ 250 — 300 էջերէ բաղկացած մեծադիր հատոր մը, հետեւեալ բաժիններով.

1. Վէպեր, պատմուածքներ, թատերգութիւններ. 2. Բանաստեղծութիւններ. 3. Գրական, պատմական և հրապարակախօսական յօդուածներ. 4. Քննադատութիւն և Մատենախօսութիւն. 5. Նորութիւններ հայ և օտար գրականութիւններէ. 6. Գիտութեան, գեղարուեստի և արհեստագիտութեան աշխարհէն. 7. Տնտեսական հարցեր. 8. Ներքին տեսութիւն. 9. Գաւառական կեանք. 10. Արտաքին տեսութիւն. 11. Նամակներ արտասահմանէն. 12. Պարբերական հրատարակութիւններ. 13. Ցաւելուած վէպ մը. 14 Ցայտարարութիւններ ամէն լեզուով։

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՆԸ

Արտասահմանի համար տարեկան 32 ֆր. կէս տարին 18 ֆր. ամսական 3 1/2 ֆր.

Բաժանորդ գրուելի փափաքողները թո՛ղ դիմեն հետեւեալ հասցէին։ կանխիկ դրկելով բաժնեգինը.

H. AGHASSER Weinber gerstr. 103II **Zürich** (Suisse)

1—8

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатнича „Взаимность“ Варна